

ԳԻՏՈՂ. — Հոս ալ սկզբնաբար ի՞նչ է ասանքը, որովհետեւ կրիան բուն է հին հայ. կրիան, արմ. *krivan. կտանի = *kta-vani, և այլն:

Բացառութիւն մը կը կազմէ միայն յոգն. զործիականն առք և ինք ձեւերով. Դասական լեզուին համար արդի աւանդութիւնը հոս ok (= հին avk) հնչումը կու տայ. նմանապէս iuk (Aid. II, էջ 372), և ոչ, ինչպէս ի սկզբան եզակի համապատասխան հոլովոյն նայելով, կարելի էր համարել avk և

ivk: Այս հնչումը շատ իրաւացի և յարմար կը գտնեմ ես գոնէ վերջին ժամանակաց դասական լեզուին համար. որովհետեւ կրիական միջին հայերէնի համար վերոյիշեալ մասնիկները անտարակոյս կը հնչուին = ok և (ինչպէս ցարդ եւս կայ) ük, ինչպէս որ հաւասարապէս օր զրութենէ ալ կ'իմացուի. Սակայն միջին հայերէն ok կը ներկայացնէ հին հայերէն auk մը, և միջ. հայ. ük, հին հայերէն iuk մը, Հմմտ. Չայնաբանութիւն § 71 և § 73 Ա. Շարայարեի

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Շար. տես յէջ 259)

ԱՁ = ԱՌԱՋԻՆ ՉԱՅՆ

Օրհ - նես - ցուք ըր Տէր - զի փա -
ազ - և փա - առ - ւո - որ

ԱԿ = ԱՌԱՋԻՆ ԿՈՂՄ

Օրհ - նես - ցուք - ը - զը - Տէր - զի փա -
ազ - և փա - առ - ւո - որ և եւր

ԲԶ = ԵՐԿՐՈՐԴ ԶԱՅՆ

0ր - - - - - չը - նե հա - ցուք ըզ
Տէր - - - - - ղի - - - փա - ռօք - - - - -
- - - - - է փա - - - - - առ - - - - - լա - - - - - որհալ - - - - -

ԲԿ = ԱԻԱԳ ԿՈՂՄ

Օրի - նեա - ցուք - - - - -
ըզ ը - Տէր - - - - - ղի փա - ռօք - - - - - է
փա - առ - - - - - լա - - - - - որ - - - - - հալ - - - - -

ԳԶ = ԵՐԿՐՈՐԴ ԶԱՅՆ

Օր - չը - - - - - նե - հա - - - - - ցուք - - - - - ը - ղը - Տէր - - - - -
- - - - - ղի փա - - - - - առ - - - - - է - փա - - - - - առ - - - - -
- - - - - լա - - - - - որ - - - - - հալ - - - - -

ԳԿ = ՎԱՌԻ ԶԱՅՆ

Օր - էլ - չե - կա - ցուց չէ - Տէր - - - -

նոք - - - - է - - - - փա - նա - -

ւա - ռ - եալ - - - -

ԴԶ = ԶՈՐԻՈՐԻ ԶԱՅՆ

Օրհնես - ցուց - - - - ը - չէ - Տէր - - - -

փա - նա - - - - ւա - - - - ռ - - - - եալ

ԴԿ = ՎԵՐՋ ԶԱՅՆ

Օրհնես ցուց ը - չէ - Տէր չէ փա - նոք է փա

նա - լոք - եալ



Ե. ԽՄԲ. — C. L. F. Panckouckeի մեր երգերու մասին զրաժ ուսումնասիրութիւնը նախորդ և ներկայ «Բազմալեզու»-ի էջերուն մէջ լոկ իբրեւ ի հետաքրքրութիւն հրատարակելով, արդ յառաջիկային կը սկսինք խաղերու ուսումնասիրութեան ամենէն ուշագրաւ մասերն հրատարակելու:



ՆՈՐ ՔՆՆԱԴԱՏԻ ՀԻՆՅԱՄ ԿԱՐՄԵԱՅ

ԱՌԹԻՒ

ԲԱՅ ՆԱԽԱԿ ԱՌ Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

ՅԱՐԳԵԼԻ տէր. Յովհան Մանգակունւոյ ֆեննագրատարեան հրատարակութենէն չորս տարի վերջ՝ առիթ ունեցայ այս օրերս կարգալու «Արեւելքի» 4356 և 4357 թիւերու մէջ, այս ուսումնասիրութեան վրայ գրուած ձեր երկու քննադատական յօդուածները, յամանակագրական խնդիրներ՝ հայ եկեղեցւոյ պատմութեան խորագրով: Գուք, յաւարտ ձեր քննադատութեան, ցաւ կը յայտնէք, որ ձեզ «վիճակած է (ի հարկէ ոչ բռնադատութեամբ) այս գերը, որ անկեղծ հիացող լըն էք Հ. Սարգիսեանի աշխատասիրութեանց», և թէ այդ գերը կատարելով՝

զուք ձեր «խիղճը հանդարտեցուցած էք. վասն զի հեշտընկալ ընթերցանութենէն աւելի բան մ'ըրած էք», դիտել տալով այն ժամանակագրական սխալները, որոնք իբրու այն թէ անգիտակցաբար սպրդած են իմ հրատարակութեան մէջ: Ես ինքզինքս վերաւորուած զգալն աւելի՝ ուրախ եմ որ ձեր խիղճը՝ ուղիղ կամ սխալ կերպով՝ հանդարտեցուցած էք, գրելով զայն՝ ինչ որ կարող էիք գրել:

Ես գովեստն և պարտաւր զրաժ չեմ երբէք նպատակ իմ գրուածոցս, այլ ճշմարտութիւնը՝ ազատ ամէն անձնական և առանձնական շահերէ կամ ձկուռեցեալ: Բնաւ յաւակնութիւն ունեցած չեմ՝ կարծելու, թէ բոլոր իմ գրածներս՝ անվիճելի ճշմարտութիւններ լինին, մանաւանդ այն խնդիրներու մէջ՝ որոնք անստուգութեան թանձր քողով մի ծածկուած են և մեծապէս վիճելի: Ուստի ինչպէս զուք, այսպէս և ուրիշներ, իրաւանց մէջ են միշտ վերաքննելու և դատելու զանոնք, և ես տրամադիր եմ, առանց զվաւմակութեան՝ ոչ միայն լսել լուրջ և անաչառ պատուաւիր, այլ և օգտուիլ անոնցմէ: Ահա այս յաւով կարգացի նաեւ ձեր քննադատութիւնը. բայց յուսախաբութեամբ աւարտ: